

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԱՏ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ФУНДАМЕНТАЛЬНАЯ НАУЧНАЯ БИБЛИОТЕКА

ԱՐԱՄ ՏԻԳՐԱՆՈՎԻՉ
ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

ԱՐԱՄ ՏԻԳՐԱՆՈՎԻՉ
ՂԱՆԱԼԱՆՅԱՆ





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ФУНДАМЕНТАЛЬНАЯ НАУЧНАЯ БИБЛИОТЕКА

МАТЕРИАЛЫ К БИОБИБЛИОГРАФИИ УЧЕНЫХ
АРМЯНСКОЙ ССР

№ 36

АРАМ ТИГРАНОВИЧ
ГАНАЛАНИЯН

Вступительная статья Э. М. ДЖРБАШЯНА и Э. А. ПИВАЗЯНА
Библиография составлена Р. А. БАБАДЖАНЯН и
Р. А. КАРАПЕТЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1986

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ
ԿԵՆՍԱՍՏԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

№ 36

ԱՐԱՄ ՏԻԳՐԱՆԻ ՂԱՆԱԼԱՆՑԱՆ

Ներածականը Է. Մ. ԶՐՈՅԵՎԱՆԻ և Է. Ա. ՊԻՎԱԶՅԱՆԻ
Մատենագիտությունը կազմել են Ռ. Ա. ԲԱՐԱՁԱՆՅԱՆԸ
և Ռ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ

A-
18008



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1986

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
ֆունդամենտալ գիտական գրադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Խ մ թ ա գ ր ա կ ա ն կ ո լ ե գ ի ա
Ս. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ (նախագահ), Կ. Ա. ԱԲԳԱՐՅԱՆ,
Գ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ, Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Պատասխանատու խմբագիր՝ Է. Ա. ՊԻՎԱԶՅԱՆ

Печатается по решению ученого совета
фундаментальной научной библиотеки
АН Армянской ССР

Редакционная коллегия:


С. А. ВАРДАНЯН (председатель), К. А. АБГАՐՅԱՆ,
Г. Б. ГАРИБՋԱՆՅԱՆ, В. С. НԱԼԲԱՆԴՅԱՆ

Ответственный редактор: Э. А. ПИВАЗЯН

4503010000
Պ 93—86
703 (02) — 86

Հայկական ՍՍՀ ԳԱ երաժշտագիտություն, 1986





ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՐԱՄ ՏԻԳՐԱՆԻ
ՂԱՆԱԼԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԽՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

Արամ Տիգրանի Ղանալանյանը ծնվել է 1909 թվականի փետրվարի 12-ին, Ախալցխայում (Վրաստան), Վախճանվել է 1983 թ. հունիսի 9-ին Երևանում:

- 1922 թ. ավարտել է Ախալցխայի յոթնամյա դպրոցը;
- 1925 թ. ավարտել է Թիֆլիսի № 72 աշխատանքային միջնակարգ դպրոցը;
- 1931 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմալեզվագրական ֆակուլտետը;
- 1932—1937 թթ. կրտսեր գիտական աշխատակից Հայաստանի կուլտուրայի պատմության, պատմության և գրականության ինստիտուտներում,
- 1934—1951 թթ. կարդացել է Հայ ժողովրդական բանահյուսության դասընթաց Երևանի Խ. Արովյանի անվ. Հայկական մանկավարժական ինստիտուտում, Հեռակա մանկավարժական ինստիտուտում (1936—1948 թթ.) և Երևանի պետական համալսարանում (1937—1941 թթ.);
- 1935 թ. արժանացել է Մելքոնյանի Փոնդի մրցանակի՝ «Հայ շինականի աշխատանքի երգերը» ձեռագիր աշխատության համար;
- 1937—1943 թթ. ավագ գիտական աշխատակից ՍՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի գրականության և լեզվի ինստիտուտում;
- 1939 թ. պարգևատրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով՝ «Սասունցի Դավիթ» էպոսի համահպատակ բնագրի «Դավիթ» և Խանդութ» և «Փոքր Մհեր» ճյուղերը պատրաստելու համար;
- 1942 թ. շնորհվել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:
- 1943 թ. շնորհվել է դոցենտի գիտական կոչում:
- 1943—1959 թթ. Հայկական ՍՍՀ ԳԱ գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության սեկտորի վարիչ:

- 1946 թ. պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով:
- 1951 թ. պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:
- 1953 թ. պարգևատրվել է Հայկական ՍՍՀ ԳԱ «Շնորհակալագրով»՝ «Ժողովրդական բանահյուսության մի քանի հարցեր» աշխատության համար:
- 1959—1983 թթ. Հայկական ՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից:
- 1964 թ. մասնակցել է մարդաբանական և ազգագրական գիտությունների միջազգային VII կոնֆերանսին (*Մոսկվա*):
- 1965—1983 թթ. Հայկական ՍՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական» հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ:
- 1965 թ. ընտրվել է Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ:
- 1967 թ. շնորհվել է Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիք՝ պատվավոր կոչում:
- 1970 թ. շնորհվել է բանասիրական գիտությունների գոկտորի գիտական աստիճան:
- Մաշտոցի անվան մատենադարանի կողմից պարգևատրվել է «Մեսրոպ Մաշտոց» հուշամեդալով:
- 1970—1983 թթ. Հայկական սովետական հանրագիտարանի գրականության գիտանուղային խմբագրության անդամ:
- 1974 թ. պարգևատրվել է Հայկական ՍՍՀ ԳԱ «Վաստակագրով»՝ գիտության ընագավառում ունեցած խոշոր վաստակի համար:
- 1977 թ. ընտրվել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս:

ОСНОВНЫЕ ДАТЫ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ
АКАДЕМИКА АН АРМЯНСКОЙ ССР
АРАМА ТИГРАНОВИЧА ГАНАЛАНЯНА

- Арам Тигранович Ганаланян родился 12 февраля 1909 г. в г. Ахалцихе (Грузия). Скончался 9 июня 1983 г. в Ереване.
- 1922 г. Окончил семилетнюю школу в г. Ахалцихе.
- 1925 г. Окончил тифлисскую 72-ю трудовую среднюю школу.
- 1931 г. Окончил историко-филологический факультет Ереванского гос. университета.
- 1932—1937 гг. Младший научный сотрудник в институтах Истории культуры, Истории и литературы АрмССР.
- 1934—1951 гг. Читал курс армянского фольклора в Ереванском армянском педагогическом институте им. Х. Абовяна, в Заочном педагогическом институте (1936—1948 гг.) и в Ереванском гос. университете (1937—1941 гг.).
- 1935 г. Удостоен премии фонда Мелконян за рукописный труд «Трудовые песни армянского крестьянина».
- 1937—1943 гг. Старший научный сотрудник Института литературы и языка Армянского филиала АН СССР.
- 1939 г. Награжден Грамотой Верховного Совета Армянской ССР за подготовку ветвей «Давид и Хандут» и «Мгер-младший» для сводного текста эпоса «Давид Сасунский».
- 1942 г. Присуждена ученая степень кандидата филологических наук.
- 1943 г. Присвоено ученое звание доцента.
- 1943—1959 гг. Заведующий сектором фольклористики Института литературы АН Армянской ССР.
- 1946 г. Награжден медалью «За доблестный труд».

- 1951 г. Награжден орденом «Знак почета».
- 1953 г. Награжден грамотой «Шноракалагир» АН Армянской ССР за работу «Некоторые вопросы устного народного творчества».
- 1959—1983 гг. Старший научный сотрудник Института литературы им. М. Абегяна АН Армянской ССР.
- 1964 г. Участвовал на VII Международном конгрессе антропологических и этнографических наук (Москва).
- 1965—1983 гг. Заместитель главного редактора «Историко-филологического журнала» АН Армянской ССР.
- 1965 г. Избран членом-корреспондентом АН Армянской ССР.
- 1967 г. Присвоено почетное звание заслуженного деятеля науки Армянской ССР.
- 1970 г. Присуждена ученая степень доктора филологических наук.
—Награжден памятной медалью «Месроп Маштоц» Матенадараном им. Маштоца.
- 1970—1983 гг. Член научноотраслевой редакции по литературе Армянской Советской Энциклопедии.
- 1974 г. Награжден грамотой «Вастакагир» АН Армянской ССР за большие заслуги в области науки.
- 1977 г. Избран академиком Академии наук Армянской ССР.

ԿՅԱՆՔԻ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՒՏ ԱԿՆԱՐԿ

Սովետահայ բանագիտական դպրոցի ականավոր ներկայացուցիչ Արամ Տիգրանի Ղանալանյանը ծնվել է 1909 թվականի փետրվարի 12-ին Ախալցխայում (Վրաստան): Յոթնամյա կրթությունը ստացել է հայրենի քաղաքում, ապա ուսումը շարունակել է Թիֆլիսի 72-րդ միջնակարգ աշխատանքային դպրոցում, որն ավարտել է 1925 թվականին: 1924—1926 թթ. բանաստեղծություններ է տպագրել «Կարմիր ծիլք» ամսագրում և «Մարտակոչ» թերթի հավելված «Դրական շաբաթ»-ում՝ Աղանի և Արամ Արման ծածկանուններով:

1927 թ. Ա. Ղանալանյանն ընդունվում է Երևանի պետական համալսարանի պատմալեզվագրական ֆակուլտետը: Այստեղ սովորելիս նա առանձին հետաքրքրություն է ցուցաբերում հայ ժողովրդական բանահյուսության նկատմամբ և այդ առարկայի դասախոս Մանուկ Աբեղյանի ղեկավարությամբ խորամուխ լինում հայ բանագիտության մեջ: Համալսարանն ավարտելուց հետո, 1932—1943 թթ. Ղանալանյանը աշխատել է Հայաստանի կուլտուրայի պատմության, պատմության և գրականության, ապա ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի լեզվի և գրականության ինստիտուտներում՝ սկզբում իրքե կրտսեր, իսկ 1939 թվականից՝ իրքե ավագ գիտական աշխատակից:

Այդ տարիներին նա զբաղվել է բանագիտական տարրեր խնդիրների ուսումնասիրությամբ, գրի է առել «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի երկու նոր պատումներ, Մ. Աբեղյանի և Գ. Աբովի հետ միասին մասնակցել է «Սասունցի Դավիթ» հյուսվածու-համահավաք բնագիրը կազմելու աշխատանքներին՝ պատրաստել է «Դավիթ և Խանդութ» և «Փոքր Մհեր» ճյուղերի բնագրերը, հրապարակել «Սասունցի Դավիթ» և «Սասունցի Դավիթի» պատմիչների կյանքն ու ստեղծագործությունը» ուսումնասիրությունները, «Հայ շինականի աշխատանքի երգերը» գիրքը:

1943 թ. Ա. Ղանալանյանի նախաձեռնությամբ Հայկական ՍՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում ստեղծվում է հայ ժողովրդական բանահյուսության բաժին, որի վարիչ է նշանակվում նա և զլիսավորում է այն մինչև 1959 թվականը, որից հետո, մինչև կյանքի վերջը, շարունակում է աշխատել նույն ինստիտուտում իրեն ավագ գիտական աշխատակից:

Արամ Ղանալանյանի գիտահետազոտական աշխատանքները հայ ժողովրդական բանահյուսության բնագավառում ընդգրկում են հետևյալ շրջան ուղղությունները.

1. Բանահյուսական նոր նյութերի հայտնաբերում և գրառում.
 2. Բանահյուսական նյութերի գիտական համահավաք թեմատիկ ժողովածուների պատրաստում.
 3. Բանահյուսության պատմության ու տեսության հարցերի լուսաբանում.
 4. Ժողովրդական բանահյուսության և գրականության փոխադարձ կապերի բացահայտում:
- Դեռևս ուսանողական տարիներին Մ. Աբեղյանի հանձ-

նարարությամբ Ա. Ղանալանյանը պատրաստում է հայ ժողովրդական բանահյուսության մատենագիտություն, ապա և գրի առնում ժողովրդական բանահյուսության նմուշներ («Սասնա ծոեր» էպոսի նոր պատումներ, աշխատանքային երգեր, առածներ ու ասացվածքներ, ավանդություններ և այլն):

Արամ Ղանալանյանի՝ իբրև գիտնականի համար առավել հատկանշականը բանահյուսության մինչ այդ չուսումնասիրված տեսակների հետազոտությունն է: Այդօրինակ աշխատություններից են «Հայ շինականի աշխատանքի երգերը», «Առածնի» և «Ավանդապատում» գրքերը, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է գիտական համահավաք թեմատիկ ժողովածու, ուր ներառված են բանահյուսական տվյալ տեսակին վերաբերող առկա բոլոր բնագիր-նյութերը (նախկինում հրապարակված և իր կողմից առաջին անգամ գրառած), գիտականորեն խմբավորված, դասակարգված և ենթարկված համակողմանի խորը ուսումնասիրության:

«Հայ շինականի աշխատանքի երգեր» գրքի «Ներածնական» խորագրով ծավալում ուսումնասիրության մեջ հեղինակը ժողովրդական երգերի մեջ տարբերակում է աշխատանքի երգերը՝ իբրև անմիջականորեն աշխատանքի, արտադրական պրոցեսների հետ կապված երգեր, որոնք ծնունդ են առել մարդու արտադրական գործունեության հետ միասին և շարունակվել են նաև հետագայում. նրանց գերը եղել է՝ աշխատանքային շարժումների ոիթմականացման միջոցով թեթևացնել արտադրական պրոցեսները, տնտեսել աշխատավորների եռանդը:

Գյուղական աշխատանքի երգերի մեջ ուսումնասիրով դիտում է մի շարք ենթատեսակներ, որոնք իրարից տարբեր-

վում են ներքին բովանդակությամբ, արտաքին կառուցվածքով /կոմպոզիցիա/, մեղեղու, երաժշտական ոիթմի և այն աշխատանքի համեմատությամբ, որին նրանք զուգակցվում են: Ըստ այս հատկանիշների էլ աշխատանքի երգերը նախմբավորում է հետեւյալ տեսակների մեջ. Հորովելներ (գութանի և չութի երգեր), սերմնացանի երգ-աղոթքներ, տափանի, հնձի երգեր, սայլի (սայլվորի) երգեր կամ «ել-ել»-ներ, քաղհանի, շանաքի երգեր՝ «նայ-նայ»-ներ, կալի, կովկիթի, խնոցու, սանդերքի, գզրոցի և այլ երգեր:

«Ներածական»-ում քննվում են աշխատանքի երգերի մեղեղու և ոիթմի հարցերը, բովանդակության սոցիալական և մյուս մոտիվները, հայ շինականի աշխատանքի երգերի գրական տեսակները կամ մշակումները և այլն:

Գրքի երկրորդ մասը կազմում են աշխատանքի երգերի բնագրերը՝ քաղված բանահյուսական ժողովածումներից, պարբերական մամուլի էջերից և գիտնականի՝ 1929—1935 թթ. ընթացքում գրի առած նմուշներից, որոնք դասվորված են ըստ իր իսկ կողմից բացահայտված ենթատեսակների:

Հայ շինականի աշխատանքի երգերն առաջին անգամ էին ի մի հավաքվում, առավել ևս՝ առաջին անգամ ամբողջական, բազմակողմանի և խոր հետազոտության նյութ դառնում: Գիրքը դեռևս ձեռագիր վիճակում, 1935 թ., արժանացել է Մելքոնյան ֆոնդի մրցանակին:

Ա. Ղանալանյանի պատրաստած բանահյուսական նյութերի գիտական համահավաք թեմատիկ ժողովածումներից երկրորդը 1951 թ. լույս ընծայած «Հայկական առածանին» է, որ բովանդակում է հայկական առածների ու ասացվածքների հնարավոր ամբողջությունը՝ գիտականորեն դասդաս-

ված ու խմբավորված, և նրանց ամենամանրակրկիտ, բազմակողմանի խոր ուսումնասիրությունը, ուր վերլուծվում են հայ ժողովրդական առածների բովանդակությունն ու արվեստը:

Առածներն ու ասացվածքները ժողովրդական բանահյուսության ամենատարածված ստեղծագործություններն են, գործ են ածվում ամեն առիթով ու ամեն ժամանակ, և դրա պատճառն այն է, որ անմիջական պատասխան են տալիս ժողովրդին հուզող բոլոր հարցերին: Դրանք, գիտնականի բնորոշմամբ՝ «պատկերավոր ու սեղմ ասույթներ են սոցիալական կյանքի, մարդկային բարքի և ժողովրդական կենցաղի ամենաբարձրագան երևույթների վերաբերյալ»: Լինելով վիպական ժանրին պատկանող ստեղծագործություններ՝ «ի տարբերություն նույն վիպական ժանրի մյուս ստեղծագործությունների, որոնց մեջ կյանքի երևույթներն ու հարաբերությունները պատկերվում են ավելի կամ նվազ ծավալուն սյուժեի միջոցով, առածների ու ասացվածքների մեջ այդ արվում է շափազանց սեղմ բանաձեւ-ընդհանրացումներով»: Հետազոտողը բացահայտում է նաև առածների ու ասացվածքների տարբերությունը. Եթե առաջինները այլաբանական ստեղծագործություններ են, որոնց բուն միտքն արտահայտված է անուղղակի կերպով, ապա երկրորդները իրականությունը դրսերում են ուղղակի ձևով: Առածների ու ասացվածքների այս բնութագիրը առաջին անգամ հայ գրականագիտության մեջ տվել է Արամ Ղանալանյանը:

Առածներն ու ասացվածքները հորինվել ու պահպանվել են ժողովրդի գոյության ողջ ընթացքում: Դժվար, երբեմն էլ անհնարին է որոշել, թե որ առածը կամ ասացվածքը երբ է ստեղծվել, բանի որ դրանք «ընդհանրապես իբրև բանավոր

ստեղծագործություններ, տեղեկանք շունեն իրենց հորինման ժամանակի վերաբերյալ», մանավանդ որ «այլաբանական հորինվածքներ են..., սյուժե շունեն և արտահայտված են ծայրաստիճան սեղմ ձևի մեջ: Առածների ստեղծման ժամանակը որոշելու համար անհրաժեշտ է ճեղքել նրանց այլաբանական կեղեր, թափանցել նրանց բովանդակության խորքը, նկատի առնել վերջինիս մեջ եղած համապատասխան ուղղակի և անուղղակի տվյալներն ու ակնարկները»: Եվ ահա Արամ Ղանալանյանին հաջողվել է իսկապես ճեղքել այդ այլաբանական կեղեր, թափանցել բազմաթիվ առածների ու ասացվածքների բովանդակության խորքը, որոշել նրանց հորինման ժամանակը, այլև ցույց տալ հայ ժողովրդի քաղաքական կյանքի, հոգեկան նկարագրի և միջավայրի արտացոլումը առածների մեջ, զոկել ինքնուրույն, ընդհանուր և փոխառյալ առածները, պարզաբանել նրանց լեզվի ու արվեստի հարցերը:

Դրքի երկրորդ բաժինը առածների ու ասացվածքների ժողովածում է, որի նյութերը առնված են ազգագրական, գրական և այլ կարգի պարբերականներից, հայ գրողների երկերից, բանահյուսական ու ազգագրական տպագիր ու ձեռագիր ժողովածումներից և հեղինակի գրառումներից:

Ա. Ղանալանյանը մշակել է ժողովածուի մեջ առածների ու ասացվածքների դասավորման ուրույն եղանակ: Սովորաբար նման ժողովածուներում նյութը դասավորվել է այբբենական կարգով: Այս գեպքում իրար հաջորդում են թե իմաստով և թե ընդհանրապես իրարից բոլորովին տարրեր առածներ և, ընդհակառակը, իրարից հեռացվում են այնպիսիք, որոնք սկզբնատառով տարրեր լինելով, իմաստով նույնա-

կան են: Այբբենական մեթոդը, այսպիսով, դժվար օգտագործելի է դարձնում ժողովածուի նյութը: Եթե հայտնի չէ փնտրվող իմաստի առածի սկզբնատառը, ապա այն գտնելու համար պետք է նայել գրեթե ողջ ժողովածուն: Այս մեթոդի մյուս թերությունն այն է, որ միևնույն առածի տարբեր տառերով սկսվող նմանակներն ու փոփոխակները ցրվում են ժողովածուի տարբեր մասերում, դժվարացնելով նրանց զարգացումն ու կրած փոփոխությունները դիտելը:

Ղանալանյանը մերժել է նաև առածների դասավորման առարկայական-անվանական եղանակը, որ տարածված է եղել եվրոպական մի շարք երկրներում: Այս եղանակի հիմնական թերությունը միևնույն թեմային վերաբերող առածների ցրումն է տարբեր տեղերում և տարբեր անունների տակ, ինչպես և սոցիալական մոտեցման բացակայությունը:

Հրաժարվելով այբբենական ու առարկայական եղանակներից, իր գրքում Ա. Ղանալանյանը առածներն ու ասացվածքները դասակարգել է իր խսկ մշակած մեթոդով՝ ըստ նրանց հիմնական իմաստի և սոցիալական բովանդակության:

Եթե նկատի ունենանք, որ առածներն ունեն այլաբանական թանձր կեղեւ, որով և խիստ դժվար վերծանելի ու խմբավորելի են, հասկանալի կղաղնա, թե որքան ջանք ու միտք էր պետք՝ թափանցելու նրանց բովանդակության մեջ, հասկանալու նրանց իմաստը և կատարելու իմաստային դասակարգում ու խմբավորում, մի բան, որ գտնում ենք լավագույնս իրականացված «Հայկական առածանի» գրքի մեջ:

1960 թ. «Հայկական առածանին» հրատարակվեց երկրորդ անգամ՝ «Առածանի» խորագրով: Այստեղ կատարված է ժողովածուի բաժինների վերադասավորում և ավելացված է մի ամբողջ բաժին՝ «Լրացում» վերնագրով, որ պարունա-

կում է շուրջ 600 նոր առած-ասացվածքներ: «Առածանին», ի տարբերություն նախորդ հրատարակության, ոմի մանրամասն առարկայական ցանկ, իմաստային-թեմատիկ ու անվանական ուղեցույց ցանկեր, որտեղ վերծանված ու բացահայտված են բոլոր առածների այլաբանական նշանակությունները: Այդ ցանկերը հեշտացնում են համապատասխան առածների ու ասացվածքների որոնումն ու օգտագործումը:

Թեմատիկ երրորդ ժողովածում՝ «Ավանդապատումը», բովանդակում է ավելի քան 900 ավանդություններ, իրենց 400 տարբերակներով, որոնք տասնամյակների ընթացքում քաղված են հարյուրավոր տպագիր ու ձեռագիր զանազան աղբյուրներից՝ միջնադարյան մատենագիրների երկերից, ազգագրական, բանահյուսական ժողովածումներից, հնախոսական, տեղագրական և ուղեգրական աշխատություններից: Ամբողջ նյութը տեղադրված է 2 բաժնում՝ ստուգաբանական-բացատրական ավանդություններ (11 ենթաբաժիններով) և վարքագրական ավանդազրույցներ (4 ենթաբաժիններով): Բնագրին նախորդում է ընդարձակ «Ուսումնասիրությունը», ուր հեղինակը տարբերազատելով ավանդությունները բանարվեստի մյուս տեսակներից, բնորոշում է դրանք որպես բանավոր արձակի փոքր ծավալի ստեղծագործություններ, որոնց մեջ արտացոլված են երկրի բնաշխարհի բնորոշ առանձնահատկությունները՝ սերտորեն կապված ու զուգորդված ժողովրդական հավատալիքների, ժողովրդի կենցաղի, նրա սոցիալ-տնտեսական, աշխատանքային, հասարակական, քաղաքական, մշակութային կյանքի երևույթների ու հասկացությունների հետ: Ուսումնասիրության մեջ հանգամանորեն պարզաբանվում են ավանդությունների տեսակ-

ները, ժանրային առանձնահատկությունները, նրանց պատմական ու ճանաչողական, ինչպես և գաղափարական ու գեղարվեստական արժեքը, ապա մանրամասն ու համակողմանիորեն քննարկվում են հայոց ազգային ավանդությունները:

Վերոհիշյալ աշխատություններում ականավոր գիտնականը, հենվելով դասական բանագիտության նվաճումների վրա, առաջադրել է ժողովրդական բանահյուսության հուշարձանների հրապարակման ու հետազոտության իր սկզբունքները, որոնք ճանաչում են գտել ոչ միայն սովետահայ, այլև բանագիտության մեջ ընդհանրապես:

Վաստակաշատ բանագետի գիտական հետաքրքրությունների ոլորտում մշտապես եղել են գրականության և ժողովրդական բանահյուսության փոխառնչությունների խընդիրները: Այս հարցերին են նվիրված «Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը», «Պոոշյանը և ժողովրդական բանահյուսությունը», «Ավ. Խաչակրյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները», «Սայաթ-Նովայի ստեղծագործության ժողովրդական ակունքները» գրքերը և «Ժողովրդական բանահյուսությունը և գեղարվեստական գրականությունը», «Ժողովրդական բառ ու բանը Սունդուկյանի երկերում», «Աղայանը և ժողովրդական բանահյուսությունը», «Թումանյանը և ժողովրդական բանահյուսությունը», «Նալբանդյանը և ժողովրդական բանահյուսությունը», «Կոմիտասը և ժողովրդական երգի բանաստեղծական խոսքը», «Վ. Սարոյանի ստեղծագործության ազգային-բանահյուսական արմատները» և այլ հոդվածներ, որոնք տպագրվել են հանրապետական թերթերում և գիտական պարբերականներում: Այս ուսումնասիրությունների մեջ քննարկվում են հայ դասական գրողների կողմից բանահյուսական նյութերի

վերամշակման եղանակները և ցույց է տրվում բանարվեստի դերը նրանց ստեղծագործության ժողովրդայնության գործում:

Նկատի ունենալով բանարվեստի՝ գրականության վրա ունեցած աղդեցության խնդրի կարևորությունը տվյալ ժողովրդի գրականության պատմության գիտական ուսումնասիրության տեսակետից, Ղանալանյանը նպատակ՝ ուներ պատրաստել առանձին մենագրական աշխատություն՝ «Հայ գրականությունը և ժողովրդական բանահյուսությունը» թեմայով։ Դեռևս 50-ական թվականների սկզբին նա պատրաստել էր ընդարձակ պլան-ծրագիր, ըստ որի աշխատությունը ունենալու էր տեսական մաս, ընդգրկելու էր հին, միջնադարյան և նոր շրջանի գրականության վրա բանահյուսության աղդեցության հարցերը, ինչպես նաև առանձին դրողների ստեղծագործությունների կապը ժողովրդական բանահյուսության հետ։ Դժբախտաբար հեղինակը շհասցրեց ամբողջացնելու ավարտել այդ աշխատությունը, որի տարբեր բաժինների մշակումներն են վերոհիշյալ հետազոտությունները, որ նա տպագրել է իրեն առանձին գրքեր ու հոդվածներ։ Պահպանվել են նաև շտպագրված մասեր։

Արամ Ղանալանյանին զբաղեցրել են բանագիտական ուրիշ խնդիրներ ևս։ Նրա ուշադրության կենտրոնում է եղել հայ ժողովրդական էպոսը՝ «Սասունցի Դավիթը»։ Բացի էպոսի նոր պատումներ գրի առնելուց, նա զբաղվել է նաև էպոսի ուսումնասիրությամբ և հրապարակել է «Սասունցի Դավիթը» և «Սասունցի Դավիթի» պատմիչների կյանքն ու ստեղծագործությունը։ աշխատանքները։ Նրա մի շարք աշխատություններ նվիրված են բանագիտության տեսության և պատմության հարցերին, ինչպես՝ «Ժողովրդական բանահյուս-

սության մի քանի հարցեր», «Դարեգին Սրվանձտյան», «Մանուկ Աբեղյանի կյանքն ու գործունեությունը» և այլն:

Գիտահետազոտական աշխատանքներին գուգընթաց Արամ Ղանալանյանը երկար տարիներ զբաղվել է նաև գիտամանկավարժական գործունեությամբ. 1934—1951 թթ. նա Երևանի Խ. Արովյանի անվան և Հեռակա մանկավարժական ինստիտուտներում, Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում կարդացել է հայ ժողովրդական բանահյուսություն առարկան, վայելելով իր սաների սերն ու համակրանքը: Ստեղծելով հայ բանագիտության մշակված դասընթաց, նա 1945—1946 թթ. հրապարակել է այդ դասընթացի 4 պրակներ (բուհական ձեռնարկի իրավունքով): Բանագետների այժմյան սերնդի ներկայացուցիչները մեծ մասամբ եղել են Ղանալանյանի ուսանողներն ու ասպիրանտները, գիտությունների թեկնածուի ու դոկտորի գիտական աստիճաններ են ստացել նրա ղեկավարությամբ:

Սկսած 1965 թվականից Արամ Ղանալանյանը Հայկական ՍՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խըմբագրի տեղակալն էր: Նա մեծ նվիրումով իր ջանքերը ի սպաս էր դնում «Հանդեսի» աշխատանքներին, ամենայն բարեխղճությամբ խմբագրում ներկայացված հայագիտական հոդվածները, միայն իրեն հատուկ հոգատարությամբ խորհուրդներ էր տալիս հեղինակներին, օգնում, ուղղություն տալիս նրանց:

Հայագիտության երախտավորը, գիտության նվիրյալը միաժամանակ ազնիվ ու անաշառ քաղաքացու կերպար էր:

Դեռևս շատ սպասելիքներ ուներ հայ բանագիտությունը Արամ Ղանալանյանից, իսկ տաղանդավոր գիտնականը շա-

բունակում էր ինքնամոռաց ու եռանդով ստեղծագործելու նա
հրատարակության էր պատրաստում «Երգիծապատում» գիր-
քը: Այն բովանդակելու էր դարերի ընթացքում մեր ժողո-
վը ստեղծած զվարճալի ու սրամիտ պատմությունները,
որ տարիների ջանադիր աշխատանքով գրի էր առել ինքը կամ
հավաքել տպագիր աղբյուրներից, ձեռագրերից: Դժբախ-
տաբար կիսատ մնացին այս՝ «Երգիծապատում» և «Մանրա-
պատում» աշխատությունները, նույնքան արժեքավոր, որքան
«Առածանին» ու «Ավանդապատումը»:

Արամ Ղանալանյանը հայ ժողովրդական բանահյուսու-
թյան, միաժամանակ նաև հին ու միջնադարյան գրականու-
թյան տեսաբան ու պատմաբան էր, բանագետ, բանասեր ու
աղբյուրագետ, հայ մշակույթի խոր գիտակ ու անխոնչ հետա-
զոտող. Հավատարիմ դասական հայագիտության ավանդնե-
րին, նա ստեղծել է բանագիտական կոթողային աշխատու-
թյուններ, թողել մնայուն գիտական ժառանգություն:

Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. Մ. ԶՐԲԱՇՅԱՆ
Բանասիրական գիտուրյունների թեկնածու
Է. Ա. ՊԻՎԱՇՅԱՆ

КРАТКИЙ ОЧЕРК ЖИЗНИ, НАУЧНОЙ И ПЕДАГОГИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Выдающийся представитель советской армянской фольклористики Арам Тигранович Ганаланян родился 12 февраля 1909 г. в г. Ахалцихе (Грузия). Семилетнее образование получил в родном городе, затем учился в тифлисской 72-й трудовой средней школе, которую окончил в 1925 году. В 1924—1926 гг. под псевдонимами Агани, Арам Арман печатал стихотворения в журнале «Кармир цилер» (Красные всходы) и в «Литературной неделе»—приложении к газете «Мартакоч».

В 1927 г. А. Ганаланян поступает на историко-филологический факультет Ереванского гос. университета. За время учебы он проявляет особый интерес к армянскому фольклору и под руководством Манука Абеляна, преподававшего этот предмет, углубляется в изучение армянского устного народного творчества. После окончания университета, в 1932—1943 гг., А. Ганаланян работает в Институте культуры Армении, в Институте истории и литературы, затем в Институте языка и литературы Армянского филиала АН СССР вначале в качестве младшего, а с 1939 г.—старшего научного сотрудника.

В эти годы он занимался изучением разных проблем фольклористики, записал два новых сказа народного эпоса «Сасна црер», совместно с М. Абеляном и Г. Абовом участвовал в составлении сводного текста «Давида Сасунского», подготовил тексты ветвей «Давид и Хандут» и «Мгер-младший», опубликовал исследования

«Давид Сасунский» и «Жизнь и творчество сказителей «Давида Сасунского», а также книгу «Трудовые песни армянского крестьянина».

В 1943 г. по инициативе А. Ганаланяна в Институте литературы АН АрмССР был создан отдел армянского фольклора, заведующим которого был назначен он и возглавлял работу отдела до 1959 года. В дальнейшем и до конца жизни Ганаланян работал в том же институте старшим научным сотрудником.

Научно-исследовательские работы А. Ганаланяна в области армянского фольклора охватывают следующие четыре направления:

1. Нахождение и запись новых материалов по фольклору
2. Подготовка научных тематических сводных сборников фольклорных материалов
3. Освещение вопросов истории и теории фольклора
4. Выявление взаимосвязи между фольклором и литературой.

Еще в студенческие годы по поручению М. Абегяна А. Ганаланян составил библиографию армянского фольклора и записал образцы устного народного творчества (новые сказы эпоса «Сасна цер», трудовые песни, пословицы и поговорки, предания и т. д.).

Для Арама Ганаланяна, как ученого, особенно характерно исследование таких видов фольклора, которые до него не были изучены. К числу указанных работ относятся «Трудовые песни армянского крестьянина», «Армянские пословицы» и «Армянские предания», каждый из которых представляет собой научный тематический сводный сборник, включающий имеющиеся все тексты по данному виду фольклора (как опубликованные в прошлом, так и записанные им впервые), научно

сгруппированные, классифицированные и подвергнутые всестороннему глубокому изучению.

Во введении книги «Трудовые песни армянского крестьянина» автор среди народных песен выделяет песни труда, как непосредственно связанные с трудом, с производственным процессом, как песни, рожденные вместе с производственной деятельностью человека и сохранившиеся в дальнейшем. Они с помощью ритмизации трудовых движений облегчали процесс производства, экономили энергию труженика.

В сельских трудовых песнях исследователь выделяет ряд подвидов, отличающихся друг от друга внутренним содержанием, композицией, мелодией, музыкальным ритмом, соответствующими тому трудовому процессу, который они сопровождают. По этим признакам автор трудовые песни подразделяет на следующие виды: оровелы (песни плуга и орала), песни-молитвы сеятеля, песни бороньи и жатвы, песни воза или «ел-ел»-ы, песни прополки, сбора хлопчатника, «най-най»-и, песни молотьбы, дойки, пахталки, карды (чесалки) и др.

В этом обширном исследовании рассматриваются вопросы мелодии и ритма трудовых песен, социальных и других мотивов содержания, литературные виды или варианты обработки трудовых песен армянского крестьянина.

Вторую часть книги составляют тексты трудовых песен, взятые из фольклорных сборников, со страниц периодической печати, а также образцы, записанные ученым в течение 1929—1935 гг. Материал распределен по подвидам, установленным самим автором.

Трудовые песни армянского крестьянина были впервые собраны воедино, более того, они впервые стали предметом полного, многостороннего и глубокого изучения. В 1935 г. еще в рукописном виде книга удостоилась премии фонда Мелконян.

Второй из подготовленных А. Ганаланяном научных тематических сводных сборников фольклорных материалов—«Армянские пословицы», который во всей возможной полноте охватывает армянские пословицы и поговорки, научно классифицированные и сгруппированные, содержит их самое тщательное, глубокое и многостороннее исследование.

Пословицы и поговорки—самые распространенные виды устного народного творчества. К ним обращаются по каждому поводу и в любое время, т. к. они непосредственно отвечают на все волнующие народ вопросы. По определению ученого, это—«образные и краткие изречения о самых разнообразных проявлениях социальной жизни, человеческих нравов и народного быта». Относясь к эпическому жанру, они «в отличие от других произведений этого жанра, в которых жизненные явления и отношения изображаются с помощью более или менее развернутого сюжета, в пословицах и поговорках это осуществляется путем чрезвычайно кратких формул—обобщений». Исследователь выявляет также различие между пословицами и поговорками. Если первые представляют собой иносказания, истинный смысл которых выражен косвенно, то впервые отражают действительность прямым путем. Эту характеристику пословиц и поговорок впервые в армянском литературоведении дал Арам Ганаланян.

Пословицы и поговорки создавались и сохранялись на всем протяжении существования народа. Трудно, порой и невозможно определить время создания той или иной пословицы или поговорки, поскольку они «как устные произведения не имеют справки относительно времени их сочинения», тем более, что они являются «иносказаниями», не имеют сюжета и выражены в чрезвычайно сжатой форме. Для определения времени созда-

ния пословиц необходимо прорвать их иносказательную оболочку, проникнуть в глубину их содержания, принять во внимание имеющиеся в нем прямые и косвенные данные и намеки». И Араму Ганаланяну удалось действительно прорвать эту иносказательную оболочку, проникнуть в глубь содержания многочисленных пословиц и поговорок, установить время их создания и показать отражение в них социальной среды, душевного склада и политической жизни армянского народа, выделить самобытные, общие и заимствованные пословицы, осветить вопросы их языка и искусства.

Второй раздел книги—сборник пословиц и поговорок, материала которого взят из этнографической, литературной и другого рода периодических изданий, из произведений армянских писателей, фольклорных и этнографических печатных и рукописных сборников, а также из записей самого автора.

А. Ганаланян разработал особый метод расположения пословиц и поговорок в сборнике. В подобных трудах обычно применялся алфавитный порядок расположения материала, при котором совершенно разные по смыслу пословицы оказываются рядом, а имеющие общий смысл, но начинающиеся с разных букв пословицы располагаются в разных местах. Этим самым алфавитный метод создает затруднения при пользовании материалом сборника: если начальная буква искомой пословицы с определенным значением неизвестна, то приходится просматривать почти весь алфавит. Другим важным недостатком алфавитного метода является то, что варианты одной и той же пословицы, начинающиеся с разных букв, попадают в разные места, затрудняя наблюдение за их развитием и изменениями.

А. Т. Ганаланян отверг также предметно-именной способ расположения пословиц, принятый в ряде европейских стран. Основным недостатком указанного спо-

соба является разбросанность пословиц на одну и ту же тему в разных местах сборника и, с другой стороны, отсутствие социального подхода.

Отказавшись от алфавитного и предметного способов, А. Ганаланян в своей книге классифицировал пословицы и поговорки по разработанному им самим методу—их основному смыслу и социальному содержанию.

Если принять во внимание, что пословицы обладают густой иносказательной оболочкой, затрудняющей их расшифровку, то станет понятным каких усилий потребовалось для проникновения в их содержание, постижения их смысла, для их классификации и группировки.

В 1960 г. сборник «Армянские пословицы» был издан вторично. В нем произведена перестановка разделов и добавлен раздел, озаглавленный «Дополнение», который содержит около 600 новых пословиц и поговорок. В отличие от предыдущего новый сборник снабжен подробным предметным указателем, тематическим и именным вспомогательными указателями, раскрывающими и разъясняющими иносказательный смысл всех пословиц. Эти указатели облегчают нахождение и использование соответствующих пословиц и поговорок.

Третий тематический сборник «Армянские предания» включает более 900 преданий с 400 вариантами, собранных в течение десятилетий из сотен различных печатных и рукописных источников—из произведений средневековых писателей, этнографических и фольклорных сборников, археологических, топографических и других трудов.

Весь материал распределен по двум разделам—этиологические-толковые предания (с 11-ю подразделами) и житийные легенды (с 4-мя подразделами). Тексту предшествует обстоятельное исследование, в котором автор выделяя предания среди других видов устного творчества, характеризует их как малые произведения

устной прозы, отражающие особенности родного края, тесно связанные с народными поверьями, бытом народа, с явлениями и понятиями его социально-экономической, трудовой, общественной, политической и культурной жизни.

В исследовании подробно рассматриваются виды преданий, их жанровые особенности, выявляется их историческая и познавательная, а также идеальная и художественная ценность. Обстоятельно и всесторонне разбираются армянские национальные предания.

В этих трудах видный ученый, опираясь на достижения классической фольклористики, выдвинул свои принципы исследования и издания памятников народного творчества, нашедшие признание не только в советской армянской, но и в мировой фольклористике.

Сфера научных интересов маститого фольклориста всегда охватывала вопросы взаимоотношений литературы и устного народного творчества. Им посвящены книги «Абовян и устное народное творчество», «Народные источники творчества Аветика Исаакяна», «Народные источники творчества Саят-Новы» и опубликованные в республиканских газетах и научной периодике статьи «Устное народное творчество и художественная литература», «Народные изречения в сочинениях Сундукияна», «Агаян и устное народное творчество», «Туманян и устное народное творчество», «Налбандян и устное народное творчество», «Комитас и поэтическое слово народной песни», «Национально-фольклорные корни творчества В. Сарояна» и другие. В этих исследованиях рассматриваются методы переработки фольклорного материала армянскими классиками и указывается на роль фольклора в народности их творчества.

Принимая во внимание важность вопроса о влиянии фольклора на литературу с точки зрения научного изучения истории литературы данного народа, А. Ганала-

нян задумал создать монографию на тему «Армянская литература и устное народное творчество». Еще в начале 50-х годов он подготовил обширный план-проспект, согласно которому названный труд должен был содержать теоретическую часть, освещающую вопросы влияния фольклора на древнюю, средневековую и новую литературу и связи творчества отдельных писателей с фольклором. К сожалению, автор не успел завершить этот труд. Вышеназванные исследования представляют собой разработки некоторых разделов задуманного труда, изданные в виде отдельных книг и статей. Сохранились также ненапечатанные части.

А. Т. Ганаланяна занимали также некоторые другие вопросы фольклористики. В центре его внимания находился армянский народный эпос «Давид Сасунский». Кроме записи новых сказов эпоса, он занимался также его изучением и опубликовал работы «Давид Сасунский» и «Жизнь и творчество сказителей «Давида Сасунского». Ряд трудов и статей ученого посвящены вопросам теории и истории фольклористики. К числу таковых относятся «Некоторые вопросы устного народного творчества», «Гарегин Срванцян», «Жизнь и деятельность Манука Абеляна» и др.

Наряду с научно-исследовательской работой А. Ганаланян долгие годы занимался педагогической деятельностью. В 1934—1951 гг. он читал курс армянского фольклора в Ереванском педагогическом институте им. Х. Абовяна, в Заочном педагогическом институте и на филологическом факультете Ереванского гос. университета, пользуясь восторженной любовью и глубоким уважением своих воспитанников.

Создав разработанный курс армянского фольклора, он издал его в 1945—1946 гг. в 4-х выпусках (на правах вузовского пособия). Представители нынешнего поколения фольклористов в основном являются бывшими сту-

дентами и аспирантами Ганаланяна, получившими ученые степени кандидатов и докторов наук под его руководством.

Начиная с 1965 г. А. Ганаланян был заместителем главного редактора «Историко-филологического журнала» АН АрмССР. С большой самоотдачей он прилагал свои усилия к работе журнала, со всей добросовестностью редактировал представленные арменоведческие статьи, со свойственной ему заботливостью давал советы авторам, помогал им и напутствовал.

Труженик арменоведения, всецело преданный науке, А. Т. Ганаланян был в то же время честным и беспристрастным гражданином.

Армянская фольклористика многое ждала от Арама Ганаланяна, и талантливый ученый продолжал самозабвенно и неутомимо трудиться. Он готовил книгу «Сатира». Она должна была содержать созданные нашим народом в течение веков остроумные и забавные истории, записанные ученым за время многолетнего кропотливого труда или собранные им из разных источников. К сожалению эти труды—«Сатира» и «Миниатюры», столь же ценные как «Армянские пословицы» и «Армянские предания», остались незавершенными.

А. Т. Ганаланян был теоретиком и историком армянского устного народного творчества, а также древней и средневековой армянской литературы, фольклористом, филологом и источникovedом, большим знатоком и неутомимым исследователем армянской культуры. Верный традициям классического арменоведения, он создал фундаментальные труды по фольклористике, оставил бесценное научное наследие.

Академик АН Армянской ССР
Кандидат филологических наук

Э. М. ДЖРБАШЯН
Э. А. ПИВАЗЯН

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ЛИТЕРАТУРА О ЖИЗНИ И ТРУДАХ
А. Т. ГАНАЛАНЯНА

Արքանամյան Ա. Ա. Գրախոս. Ղանալանյան Ա. Ավանդապատում: Եր., 1969: —Սովետ. գրակ., 1970, № 3, էջ 137—141.

Абрамян А. А. Рец. на кн.: Ганаланян А. Армянские предания.

Խարլայն Մ. Ա. Գրախոս. Ղանալանյան Ա. Հայկական առածանի: Եր., 1951: —Սովետ. Հայաստան, 1951, № 12, էջ 37:

Баблоян М. А. Рец. на кн.: Ганаланян А. Армянские пословицы.

Դավթյան Հ. Մ. Գրախոս. Ղանալանյան Ա. Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը: Եր., 1941: —Սովետ. դպրոց, 1941, 12 համիսի: [Պ. Ղազարյանի հետ համատեղ]:

Давтян Г. М. Рец. на кн.: Ганаланян А. Абоян и устное народное творчество. [Совместно с П. Казаряном].

Թեմիրյան Դ. Մեծարժեք գործ: Գրախոս. Ղանալանյան Ա. Հայկական առածանի: Եր., 1951: —Տեղեկագիր /ՀՍՍՀ ԳԱ. Հաս գիտ., 1951, № 12, էջ 93—101:

Демирчян Д. Ценный труд. Рец. на кн.: Ганаланян А. Т. Армянские пословицы.

Գոլովանյան Ա. Հայ բանագիտության մեծ երախտավորը: [Ա. Տ. Ղանալանյանին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս ընտրելու առթիվ]: —Հայոց լեզուն և գրական պատրունակ, 1977, № 4, էջ 55—57:

Դոլոխանյան Ա. Выдающийся труженик армянской фольклористики. [По поводу избрания А. Т. Ганаланяна академиком АН Арм. ССР].

Դուշքագյան Կ. Գ. Ժողովրդի իմաստության գանձարանը: Գրախոս. Ղանալանյան Ա. Առաջանք: Եր., 1960: —Բանվոր, 1961, 21 փետր.:

Դյուրգարյան Կ. Գ. Сокровищница народной мудрости. Рец. на кн.: Ганаланян А. Армянские пословицы.

Դուշքագյան Կ. Գ. Հայ «Ավանդապատումը»: Գրախոս. Ղանալանյան Ա. Ավանդապատում: Եր., 1969: —Բանվոր, 1969, 15 նոյեմբ.:

Դյուրգարյան Կ. Գ. Рец. на кн.: Ганаланян А. Армянские предания.

Զարյան Ռ. Վ. Կենտրոնացման ուժը: (Արամ Ղանալանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ): —Ավանդարդ, 1969, 25 մարտի:

Զարյան Ռ. Վ. Сила концентрации. (К 60-летию со дня рождения Арама Ганаланяна).

Էմիրյան Մ. Լ. Արժեքերավոր ժողովածու: Գրախոս. Ղանալանյան Ա. Հայկական առաջանք: Եր., 1951: —Սովետ. Վրաստան, 1951, 21 նոյեմբ.:

Էմիրյան Մ. Լ. Ценный сборник. Рец. на кн.: Ганаланян А. Армянские пословицы.

Քամբագյան Հ. Ժողովրդական ավանդությունների ներքին խորհուրդը: Գրախոս. Ղանալանյան Ա. Ավանդապատում: Եր., 1979: [Խուս. լեզվ.]: —Սովետ. Հայաստան, 1980, 24 ապր.:

Դամբարյան Լ. Գлубинный смысл народных преданий. Рец. на кн.: Ганаланян А. Т. Армянские предания.

Խնճիկյան Ա. Մ. Գրախոս. Ղանալանյան Ա. Հայ շինականի աշխատանքի երգեր: Եր., 1937: —Գրակ. թերթ, 1937, 19 հունվ.:

Ինձյուկյան Ա. Մ. Рец. на кн.: Ганаланян А. Трудовые песни армянского крестьянства.

Խարայելիսն Ռ. Արժեքավոր աշխատությունն Գրախոս. Ղանալանյան Ա. Հայկական առածանի: Եր., 1951: — Գրակ. թերթ, 1951, 24 նոյեմբ.

Իսրայել Բ. Ценный труд. Рец. на кн.: Ганаланян А. Армянские пословицы.

Խանզադյան Ս. Գրախոս. Ղանալանյան Ա. Հայկական առածանի: Եր., 1951: — Ավանդարդ, 1951, 11 հոկտ.

Խանզադյան Ս. Գրախոս. Ղանալանյան Ա. Հայկական առածանի: Եր., 1951: — Ավանդարդ, 1951, 11 հոկտ.

Կարգինյան Ա. Բ. Գրախոս. Ղանալանյան Ա. Արովյանը և ժողովրդական բանահյուսությունը: Եր., 1941: — Սովետ. գրակ., 1941, № 12, էջ 108—110:

Կարինյան Ա. Բ. Գրախոս. Ղանալանյան Ա. Աբովյան и устное народное творчество.

Կորյուն Մ. Գ. Արժեքավոր ներդրում բանագիտության մեջ: Գրախոս. Ղանալանյան Ա. Ժողովրդական բանահյուսության մի բանի հարցեր: Եր., 1954: — Բանվոր, 1954, 22 սեպտ.:

Կորյուն Մ. Գ. Ценный вклад в фольклористику. Рец. на кн.: Ганаланян А. Некоторые вопросы устного народного творчества.

Հակոբյան Պ. Հ. Ականավոր բանագետի վաստակը: [Ա. Ղանալանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ]: — Հայրենիքի ձայն, 1969, 12 մարտի, էջ 5—6:

Ակոպյան Պ. Օ. Заслуга видного фольклориста. [К 60-летию со дня рождения А. Ганаланяна].

Հայ բանագիտության անխոնչ մշակը: (ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ղանալանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ): — Լրաբեր հաս. գիտ. /ՀՍՍՀ ԳԱ, 1969, № 2, էջ 104—105:

Неутомимый исследователь армянского фольклора. (К 60-летию со дня рождения члена-корреспондента АН АрмССР А. Ганаланяна).

Հարությոնյան Ա. Բ. Գրախոս. Ղանալանյան Ա. Տ. Ավանդապատռմ. օր., 1969; —Հայոցներ (Բոստոն-ԱՄՆ). 1970, 10 փետր.:

Арутюнян С. Б. Рец. на кн.: Ганаланян А. Армянские предания.

Հարուրյոնեան Ս. Բ. Հայ առածների գանձարանը: («Առածնանու երկ-
որդը հրատարակության առթիվ»): —Գրակ. թերթ, 1961, 17 մարտի:

Арутюнян С. Б. Сокровищница армянских пословиц. (По поводу второго издания «Армянских пословиц»).

Հարուրյոնյան Ա. Բ. Հայագիտական բարձրարժեք երկի։ Գրախոս. Ղանալանյան Ա. Ավանդապատռմ։ Եր., 1969։ —Սովետ. Հայաստան, 1970, 10 հունվ.

Арутюнян С. Б. Ценнейший труд по арменоведению. Рец. на
ки.: Ганаланян А. Армянские предания.

Σωτηριόπουλειαν. Ο. Β. Σωτηρίκακιαν αψινηποτήριοινέρη τανδαρωνην
[ε] Αψινηπωασιπομήρα μασικήν. — Φρούρητη αρχιμαρτί, 1969, 31 ζηκτική.

Арутюнян С. Б. Сокровищница армянских преданий. [Об «Армянских преданиях»].

Հարուրյունյան Ս. Բ. Մաքուր խղճով և արդար վաստակով՝ —Գրակ-
թերթ, 1983, 24 հունիսի:

Арутюнян С. Б. С чистой совестью и честным трудом.

Հարուրյունյան Ա. Բ. Սովետահայ բանագիտության առաջամարտիկը (Արամ Ղանալանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ): —Գրակ. թերթ, 1969, 21 փետր.,

Арутюнян С. Б. В авангарде армянской советской фольклористики. (К 60-летию со дня рождения Арама Ганаланяна).

Ղարությունյան Ա. Բ. Վաստակաշատ բանագիտը: (Արամ Ղանալան-
յանի ծննդյան 60-ամյակի առթիվ): —Պատմա-բանասիր. Հանդես /ՀՍՍՀ
ԳԱ, 1969, № 1, էջ 155—162:

Арутюнян С. Б. Заслуженный фольклорист. (К 60-летию со дня рождения Арама Ганаланяна).

Ղանալանյան Արամ Տիգրանի:—«Հայկական ՍՍՀ դիտությունների ակադեմիա: Անձնակազմը. 1943—1983» գրքում, Եր., 1984, էջ 79,
Նույնը ուսա. լեզվ.

Ղանանյան Արամ Տիգրանովիչ.—В кн.: Академия наук Армянской ССР. Персональный состав. 1943—1983. Ер., 1984, с. 57.

Մանարի Գ. «Առածանի» տարածանի: (Գրախոսականի փոխարեն):
Գրակ. թերթ, 1961, 17 փետր.:

Մարտիրոսյան Ռ. (Вместо рецензии). [На кн.: «Армянские пословицы»].

Մարտիրոսյան Ա. Գրտնականի պարգևը: (Արամ Ղանալանյանի ծննդյան
60-ամյակի առթիվ): —Սովետ. Հայաստան, 1969, 25 փետր.:

Մարտիրոսյան Ա. Награда ученого. (К 60-летию со дня рождения
Арама Ганаланяна).

Մկրտչյան Մ. Ա. Գրախոս. Ղանալանյան Ա. Ժողովրդական բանա-
հաւաքության մի քանի հարցեր: Եր., 1954: —Սովետ. Հայաստան, 1955,
17 փետր.:

Մկրտչյան Մ. Ս. Рец. на кн.: Ганаланян А. Некоторые вопросы
фольклора.

Մկրտչյան Մ. Ա. Գրախոս. Ղանալանյան Ա. Իսահակյանի ստեղծա-
գործության ժողովրդական ակունքները: Եր., 1955: —Սովետ. Հայաստան,
1956, № 1, էջ 42:

Մկրտչյան Մ. Ս. Рец. на кн.: Ганаланян А. Народные истоки
творчества Исаакяна.

Մուրադյան Հ. Բ. Գրախոս. Ղանալանյան Ա. Հայ ժողովրդի հերոսա-
պատումները: Եր., 1942: —Սովետ. գրակ., 1942, № 8, էջ 91—92.

Մուրադյան Հ. Բ. Рец. на кн.: Ганаланян А. Геронические сказы
армянского народа.

Մուրադյան Ա. Ժողովրդի իմաստությամբ բեռնալորշած: —Սովետ.
Հայաստան, 1981, № 2, էջ 26—28.

Մուրադյան Ս. Обогащенный народной мудростью.

Նազինյան Ա. Մ. Գրախոս. Ղանալանյան Ա. Հայկական առածանիք Եր.,
1951, —Կոմունիստ, 1951, 28 դեկտ.

Назиняц А. М. Рец. на кн.: Ганаланян А. Армянские предания.

Նազինյան Ա. Մ. Նոր աշխատություններ ժողովրդական բանահյուսության վերաբերյալ: Գրախոս. Ղանալանյան Ա. Ժողովրդական բանահյուսության մի քանի հարցեր: Եր., 1954: —Տեղեկագիր /ՀՍՍՀ ԳԱ, Հաս. գիտ., 1955, № 3, էջ 85—89:

Назинян А. М. Новые работы об устном народном творчестве.
Рец. на кн.: Ганаланян А. Некоторые вопросы народного творчества.

Նալբանդյան Վ. Ս. Արժեքավոր ավանդ հայ ժողովրդական բանահյուսության ռազմական առաջնահամարության մեջ, Գրախոս. Ղանալանյան Ա. Հայկական առածանիլ, Եր., 1951. — Սովոր. գրակ. և արվեստ, 1951, № 10,էջ 160—165.

Налбандян В. С. Ценный вклад в изучение армянского фольклора. Рец. на кн.: Ганаланян А. Армянские пословицы.

